

4.ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ¹⁶

Ծրագրով նախատեսված սույն հատվածի թվով 52 վիճակագրական աշխատանքները (411001-411015, 412001-412020, 420001-420006, 430001-430007, 440001, 450001, 460001, 470001, ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (19 ամսական, 18 եռամսյակային, 1 կիսամյակային և 14 տարեկան):

Ոլորտի վերաբերյալ սկզբնական վիճակագրական տվյալները հավաքագրվել և մշակվել են թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (3-ը՝ միջազգային ծառայությունների առևտրի գծով, 1-ը՝ օտարերկրյա ներդրումների, 2-ը՝ բնական գազի ներմուծման և 1-ը՝ զբոսաշրջության):

Բացի այդ, արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի գծով ցուցանիշների հաշվարկման համար օգտագործվել են վարչական ռեգիստրների՝ մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից ստացվող բեռնամաքսային հայտարարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի տվյալների բազաները, ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացված տեղեկանքները:

Կազմվել են.

-2003թ. IV եռամսյակի և տարեկան, 2004թ. I, II և III եռամսյակների Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռները և Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը, ինչպես նաև ՀՀ համախառն արտաքին պարտքը և համախառն ակտիվները 2004թ. մարտի, հանիսի և սեպտեմբերի վերջի դրությամբ, ըստ տնտեսության հատվածների, ֆինանսական գործիքների և ժամկետայնության:

Մշակվել և հրապարակվել է 2003-2004թթ. 9 ամիսներում Հայաստանի Հանրապետությունում կատարված օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ գործունեության ոլորտ-երկիր կտրվածքի:

Հավաքագրվել են.

-ամսական կտրվածքով՝ տվյալներ արտաքին առևտրի, մասնավորապես՝ բեռնա-մաքսային հայտարարների և ֆիզիկական անձանց կողմից կատարվող առևտրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի ներմուծման և արտահանման ծավալների վերաբերյալ,

-եռամսյակային կտրվածքով՝ տվյալներ միջազգային ծառայությունների առևտրի (կապ, զբոսաշրջության, տրանսպորտ, մշակույթ, սպրանքներ ձեռքբերված տրանսպորտային կայաններում, ֆինանսական և այլն), օտարերկրյա ներդրումների (ուղղակի, պորտֆելային և այլ՝ ներառյալ միջազգային վարկերը), բանկային վիճակագրության վերաբերյալ:

Հայաստանը հանդիսանալով ԱՄՀ ՏՏՀՄ-ի անդամ երկիր, յուրաքանչյուր ամիս և եռամսյակ ՀՀ ԱՎԾ կողմից վարվող ՏՏՀՄ Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների

¹⁶ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Էջում տեղադրվել են վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի, համախառն ակտիվների և ապրանքների արտաքին առևտրի վերաբերյալ ամփոփ տվյալները:

Համաձայն ՀՀ ԱՎԾ և Եվրոստատի միջև կնքված արտաքին առևտրի տվյալների փոխանակման Համաձայնագրի, յուրաքանչյուր եռամսյակ Եվրոստատին ներկայացվել են արտաքին առևտրի տվյալները 8-նիշ կտրվածքով, համապատասխան մակետով, իսկ 2003թ. տարեկան տվյալները նույնպես 8-նիշ կտրվածքով ներկայացվել են նաև Միավորված Ազգերի Կազմակերպության վիճակագրական վարչությանը: Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի տվյալները եռամսյակային կտրվածքով ներկայացվել են ԱՄՀ վիճակագրական վարչությանը: